մական վաւերաթղթերի և նոր բերած թանգագին և հաղուագիւտ ձեռագրերի տեղեկագրերը շուտով կը ծանուցանուին Արարատի ընթերցողներին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ·

ԲԱՂՈՒԱԾՔ ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՆԵՐԻՑ·

Կոնդակ յանուն փոխանորդի Նոր Նախիջևանի Մխիթար վարդապետի Տ. Մկրտչեան, որով շնորհի նմա վարդապետական լանջախաչ ականակուռ։ Հ· 276·

Կոնդակ յանուն Տիրայր վարդապետի Տէր Յովհաննիսեան՝ նախանդամի Հոգ. Կառավարութեանց և քարոզչի Եկեղեցեաց Մոսկուայի և Պետերբուրգի, որով շնորհի նմա վարդապետական լանջախաչ ականակուռ։ Հ· 277·

Կոնդակ յանուն Մխիթար վարդապետի փոխ. Ն. Նախիջևանի, որով թոյլատրի նմա բանալ օրիորդական դպրոց ի գաւթի Ս. Նիկողայոս եկեղեցւոյն Ն. Նախիջևան քաղաքի։ Համար 307·

Կոնդակ յանուն Պ. Մակարայ Եկմալեան, որով թոյլատրի նմա տպագրել զաշխատասիրութիւն իւր զձայնագրեալ խորհրդատետր պատարագի։ Հ· 325·

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Գէորգ Աղայի և Տիկին Եւայի Կրասիլնիկեանց, սակս հիւրասիրելոյ և հիւրընկալելոյ Նորին Սրբութեան ի տան իւրեանց Եռամսեայ ժամանակաւ ի Ն. Նախիջևան։ Հ· 330·

Կոնդակ յանուն Աբրահամ քահանայի Վաղարշեանց միաբանի ս. Փրկիչ եկեղեցւոյ Ախալցխայ, որով շնորհի նմա Կամիլաւկա, ըստ միջնորդութեան Առաջն. Տփխեաց Գեր. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրէնեանց։ Հ· 343·

Կոնդակ յանուն Կարապետ քահ. Տ. Գրիգորեան միաբանի ս. Փրկիչ Եկեղեցւոյ Ախալցխայի, որով շնորհի նմա աւագ քահանայութիւն ըստ միջնորդութեան Գեր. Առաջ. Տփխեաց։ Հ· 344·

Կոնդակ յանուն Գէորգ Արքեպիսկոպոսի Առաջնորդին Տփխեաց, որով պատուիրի նմա առնել նոր ընտրութիւն Տեսչի վասն Ներսիսեան հոգ. դպրանոցին Տփխեաց։ Հ· 348·

Կոնդակ յանուն միացեալ Հոգաբարձութեան դպրոցաց Աղէքսանդրապոլի, որով հաստատի ի պաշտօն նախագահի Հոգաբարձութեան յաջորդ վիճակին Տ. Բաղրատ վարդապետ Թաւաքալեան և Յովհաննէս Տ. Միրաքեան ընդհանուր տեսուչ դպրոցաց քաղաքին։ Հ· 392·

Կոնդակ յանուն նախագահի և հոգաբարձութեան Ներսիսեան դպրանոցի Տփխեաց, որով հաստատի ի պաշտօն տեսչութեան նոյն դպրանոցի Սամուէլ Բալաղեան։ Հ· 393·

Կոնդակ յանուն հոգաբարձութեան թեմ. դպրանոցին Ն. Նախիջևանի, որով հաստատի ի պաշտօն տեսչի դպրանոցին Գալուստ Կարապետեան Ձարբխեան։ Հ· 409·

Կոնդակ յանուն Եղնիկ քահ. Դիլանեան, գործակալի կողմանց Թալինոյ, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական։ Հ· 418·

Կոնդակ յանուն Եղիշէ քահ. գործակալին Ջիվանշիրու, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Առաջնորդին Արցախու Կարապետ եպիսկոպոսին Այվազեան։ Հ· 421·

Կոնդակ յանուն Խորէն քահանայի Իսկէնտէրեան ի Շուշի, որով շնորհի նմա Կամիլաւկա, ըստ միջնորդութեան նոյն Առաջ. Արցախու։ Հ· 422·

Կոնդակ յանուն Աղէքսանդր քահ. Բաղդասարեան ի Շուշի, որով շնորհի նմա Կամիլաւկա, ըստ միջնորդութեան նոյն Առաջնորդի։ Հ· 423·

Կոնդակ յանուն Արթանէս քահ. գործակալի կողմանցն Խաչէնի, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան նոյն Առաջնորդին։ Հ· 424·

Կոնդակ յանուն Վահան քահ. Շահումեան ի Շուշի, որով շնորհի նմա Կամիլաւկա, ըստ միջնորդութեան նոյն Առաջնորդին։ Հ· 425·

Կոնդակ յանուն Բարսղի Խաթանպօլեան ի Կ. Պոլիս, որով հաստատի ի պաշտօն Գանձապետութեան Մայր Աթոռոյ ի Կ. Պոլիս, ըստ առաջարկութեան Ամենապատիւ Պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոսի Իզմիրլեան։ Հ· 481·

—

Ըստ հրամանի Նորին Վեհափառութեան ընդունուած են ի շարս դասագրաց մեր եկեղեցական—ծխական դպրոցների՝

1· Քիշմիշեան—Նախագիտելիք Բուսաբանութեան։

2· Ճաղարբեգեան—Հայոց լեզու բ· տարի։

—